Անձի ֆունկցիոնալությունը գնահատող հանձնաժողովների բազմամասնագիտական թիմի կազմը համալրելու նպատակով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ձևավորված մասնագետների պետական ռեեստրում գրանցվելու նպատակով ՀՀ մարզերից համապատասխան մասնագետների ներգրավումն ապահովելու վերաբերյալ

Հաշմանդամություն ունեցող անձանց կյանքի տարբեր ոլորտներում ակտիվ մասնակցության խթանման, նրանց լիարժեք կենսագործունեության համար անհրաժեշտ միջավայրային գործոնների բացահայտման և նպատակային ծառայությունների ներդրման նպատակով ՀՀ կառավարությունն՝ ի դեմս ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, նախաձեռնել է հաշմանդամության գնահատման համակարգի բարեփոխումների և անձի ֆունկցիոնալության գնահատման նոր համակարգի ներդրմանն ուղղված հիմնարար քայլեր:

Ներդրվող նոր համակարգը կառուցվում է Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) Ֆունկցիոնալության, հաշմանդամության և առողջության միջազգային դասակարգման (ՖՄԴ) սկզբունքներով և մոտեցումներով՝ հիմքում ունենալով 2021 թվականի մայիսի 5-ին ՀՀ ԱԺ-ի կողմից ընդունված «Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» ՀՀ օրենքը (այսուհետ՝ Օրենք):

Անձի ֆունկցիոնալությունը գնահատող հանձնաժողովների բազմամասնագիտական թիմի կազմն ապահովելու նպատակով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ձևավորվում է մասնագետների **պետական ռեեստր:** Պետական ռեեստրը բաղկացած է երկու բաժնից, որոնցից յուրաքանչյուրում ընդգրկվում են հետևյալ մասնագետները՝

1. **օրգանիզմի ֆունկցիաները և մարմնի կառուցվածքը գնահատող մասնագետներ,**

2. **անձի գործունեությունը և մասնակցությունը գնահատող մասնագետներ:**

Պետական ռեեստրում ընդգրկվելու և գնահատման հանձնաժողովներում աշխատելու հետաքրքրվածություն ունեցող բոլոր մասնագետները կարող են գրանցվել այդ նպատակով ստեղծված մասնագետների հաշվառման հարթակում:

Մասնագետների դիմումների հաշվառման հարթակում գրանցման համար անհրաժեշտ է մուտք գործել հետևյալ հղումով՝ https://bit.ly/3c3t60s և գրանցել անհրաժեշտ տվյալները, իսկ գրանցման մասին պատմող տեսանյութը դիտել հետևյալ հղումով՝ https://bit.ly/3PEZIeK:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Օրենքի գործողությունը նախատեսված է սկսել 2023 թվականի փետրվարի 1-ից՝ խնդրում եմ հանձնարարել Ձեր պաշտոնական կայքում տեղադրել մասնագետների պետական ռեեստրում գրանցվելու հայտը՝ Ձեր ենթակայության բժշկական, կրթական և այլ հաստատություններում աշխատող և մարզում առկա համապատասխան մասնագետների հավաքագրման նպատակով:

Միաժամանակ խնդրում եմ Ձեր աջակցությունը՝ մարզպետարանների ենթակայության բժշկական հաստատությունների մասնագետներին իրազեկելու բժշկասոցիալական փորձաքննության ոլորտի բժիշկ-փորձագետների ներքոնշյալ հաստիքները համալրելու հնարավորության մասին:

Օրգանիզմի ֆունկցիաները և մարմնի կառուցվածքը գնահատող մասնագետներ		**Անձի գործունեությունը և մասնակցությունը գնահատող մասնագետներ**
18 տարեկանից բարձր	**մինչև 18 տարեկան**	
1. Օրթոպեդ 2. Վնասվածքաբան	1. Մանկաբույժ 2. Մանկական օրթոպեդ-	1. Հոգեբան 2. Կինեզոլոգ

3. Ակնաբույժ 4. Սրտաբան 5. Քիթ-կոկորդ-ականջաբան 6. Նյարդավիրաբույժ 7. Հոգեբույժ 8. Էնդոկրինոլոգ 9. Վիրաբույժ 10. Նյարդաբան 11. Թերապևտ 12. Արյունաբան 13. Գաստրոէնտերոլոգ 14. Նեֆրոլոգ/երիկամաբան 15. Ուռուցքաբան 16. Մաշկաբան 17. Ռևմատոլոգ 18. Ուռոլոգ 19. Թոքաբան	վնասվածքաբան 3. Մանկական ակնաբույժ 4. Մանկական սրտաբան 5. Մանկական նյարդաբան 6. Մանկական քիթ- կոկորդ-ականջաբան 7. Մանկական նյարդավիրաբույժ 8. Մանկական հոգեբույժ 9. Մանկական ներզատաբան 10. Մանկական վիրաբույժ	3. Էրգոթերապիստ 4. Լոգոպեդ 5. Տիֆլոմանկավարժ 6. Սուրդոմանկավարժ 7. Օլիգոֆրենոմանկավարժ 8. Սոցիալական մանկավարժ 9. Մանկական հոգեբան 10. Հատուկ մանկավարժ
20. Վերականգնողաբան	11. Մանկական վերականգնողաբան	

Հարցերի դեպքում կոնտակտային հեռախոսահամարներ՝ 010 52-17-61, 010 56-43-80, 060 65-28-21: